

Գր^{իգոր} իսի եւ նոցին զաւակացն: Լիցի նոցա պատարագ յեկեղեցիս ի տաւնի Աստուածանին .Գ. աւուրսն, բայց զ.Ա.՝ Հասանա՝ հաւր Վախտանգա, եւ զ.Ա.՝ մաւր նոցին Մամին, եւ .Բ.՝ հաւր Արզու խաթունի՝ Քրդին բարեպաշտին...»⁸⁶: Նոյն Վախտանգին նուիրած իր Դատաստանագրքի օրինակի (իմա՝ Բ խմբագրութեան մայրը, որ պահուում է Վենետիկի Մխիթարեան մատենադարանում, 1237) յիշատակարանում Մխիթար Գօշը նշում է. «...իշխանաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ», նաեւ շարունակութեան մէջ՝ «Յիսուս Քրիստոս... նորոգեա՝ հոգով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսին իւր զԱրզու խաթունն ի կեանս անմահա...»⁸⁷:

Նոյն տարիներին իբրեւ Ներքին խաչէնի տիրակալ է հանդէս գալիս Վախտանգ Տանգիկը (կինը՝ Սարգիս Զաքարեան ամիրսպասալարի դուստր Խորիշահ)՝ Գանձասարի հոյակերտ տաճարի կառուցող Զալալ Դօլայ Հասանի հայրը եւ որդին «Հասան Մեծի»: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «Այլ եւ բարեպաշտուհի մայր սորա [իմա՝ Հասան Զալալի], յետ մահուան առն իւրոյ Վախթանկայ [9-10 ձեռ.՝ Վախտանգայ], զոր Տանկիկն [4 ձեռ.՝ Թանկիկն] կոչէին, կարգաւորեաց զերեսին որդիսն իւր՝ զԶալալն եւ զԶաքարէ եւ զԻւանէ, չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ...»⁸⁸: Այս Վախտանգը մօտաւորապէս 1212 թ.⁸⁹ ըն-

դօրինակուած Աւետարանի պատուիրատուն է, որի յիշատակարանում ասում է. «Աստանաւր յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այսորիկ սրբոյ Աւետարանիս հրամանաւ եւ ծախիւք բարեսէր եւ աստուածահաճոյ առն Վախտանգա, որդւոյ Հասանա, որդւոյ Վախտանգա, եւ քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի»⁹⁰: Ի դէպ, շարունակութեան մէջ ասում է նաեւ. «Արդ, ես՝ Վախտանգ եւ լծակից իմ Խորիշահ, ըստ կամացն Աստուծոյ քաղաքավարեալ, ծնաք երիս ուստերս եւ երիս դստերս...»: Վախտանգի երեք որդիների մասին է նշուած նաեւ Վանենի Խաղբակեանի 1232 թ. վերը բերուած յիշատակարանում («Իտէրութիւն երից հարազատիցըն՝ բարեպաշտ իշխանացն Զալալին, Զաքարիայի, Իւանէի»)՝⁹¹: Ընդամին, Գանձասարի 1238 թ. աւարտուած կաթողիկէի («աւարտումն եղեւ շնորհաւք ողորմութեամբ ամենալուսթ Տեառն :ՈԶէ: ԹՎի [=1238 թ.]») շինարարական՝ 1240 թուակիր

86 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. VI, Իջեւանի շրջան, էջ 64-65, N 127, լուս. 27: Բնագրում թուականը շտապողաբար «1197» են վերծանել: Վախտանգ իշխանաց իշխանի մօր անունն Մամին ձեռի փոխարէն կարելի է գտնել տալ վերականգնումով՝ Մամային կամ Մամախաթունին:

87 Տե՛ս Մխիթար Գօշ, Գիրք դատաստանի, էջ 548, ծմթ. 32:

88 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, գլ. I, էջ 268:

89 Հմմտ. Բ. Ա. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 143-144: Ուսումնասիրողը յիշատա-

կարանի պնդումը՝ ստացողներ Վախտանգի եւ Խորիշահի կողմից եկեղեցի կառուցած լինելու մասին («շինեցաք զեկեղեցիս եւ երեսնի սպասիւք զարդարեալ մերքո եւ արտաք եւ հաստահեղում յարիմուածովք») իրաւացիօրէն կապում է Մեծարանից Ս. Յակոբաւանքում արեւմտեան եկեղեցու պատի վրայ Խորիշահի թողած՝ 1212 թուակիր 12 տողանոց վիմագրի հետ, ուր ասում է. «ՈԿԱ: Թիւ [=1212 թ.]. ես՝ Խորիշահ, ամուսին Վախտանգա՝ տէր Խաչէնոյ, դուստր մեծին Սարգսի, քոյր Զաքարի եւ Իւանոյ, վերջապէս շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ, ի բարեխաւս զաւակաց իմոց... զՎախտանգ եւ զիս յաղա[ւ]թս յիշեցէ՛ք» (Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 12, N 2):

90 ՄՄ, ձեռ. Թիւ 378, Թ. 308ա: Հմմտ. Ի. Օրբելի, Կ. Асан Джалал, князь Хаченский, - В кн.: Ի. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, էջ 148. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դար, էջ 94:

91 Տե՛ս վերելում, ծմթ. 44: Վարդան Վարդապետի բնագրում ասում է անգամ երկու որդիների մասին «մեռաւ... թողլով երկու տղայս» (տե՛ս ստորեւ, ծմթ. 97):